ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ՍՍՀՄ կազմավորումն իր քաղաքական նշանակությամբ և սոցիալ-տնտեսական արդյունքներով բախտորոշ տեղ է գրավում սովետական բազմազգ պետության պատմության մեջ։

Համաժողովրդական սոցիալիստական պետականության հիմքի վրա սովետական հանրապետությունների միավորումը հանդիսացավ սովետական մարդկանց անօրինակ սխրագործությունների ու հաղթանակների վճռական գործոններից մեկը՝ նախկինում հետամնաց երկիրը հզոր, զարգացած տերության՝ խաղաղության և սոցիալիզմի ուժերի անառիկ ամրոց դարձնելու գործում։ ՍՍՀՄ ձևավորումը, ամրապնդումը և զարգացումն ունեն համաշխարհային պատմական նշանակություն։

Սոցիալիստական պետության կեսդարյա պատմությունը վկայում է, որ այն պետության կառուցման առավել կենսունակ և կատարելագործված ձևն էր, որի բոլոր հաղթանակների հիմքում դրված է սովետական ժողովուրդների անօրինակ ստեղծագործությունը։

Արտաքին և ներքին հակահեղափոխության դեմ մղված ահեղ գոտեմարտերում ստեղծված ռազմա-քաղաքական դաշինքը, արտաքին-քաղաքական գործունեության համակենտրոնացումը, ժողովրդական տնտեսության վերականգնման, երկրի տնտեսական զարգացմանն ու պաշտպանունակության ամրապնդմանն ուղղված միացյալ ջանքերը նպաստեցին իրավահավասար ժողովուրդների համախմբվածությանը միասնական սոցիալիստական ընտանիքում։

Դեռևս 1918 թ. հունվարին հանդես գալով Սովետների համառուսաստանյան III համագումարում, Վ. Ի. Լենինը խորաթափանցությամբ կանխագուշակեց մեր երկրի փառապանծ ապագան, որն այն ծանր օրերին իր վրա ընդունեց միջազգային իմպերիալիզմի հարվածը՝ հանուն ճնշումից և շահագործումից մարդկության հաղթական ազատագրման։

«Սովետների մեր սոցիալիստական հանրապետությունը հաստատուն կերպով կանգնած է մնալու բոլոր աշխատավոր մասսաների առաջ որպես միջազգային սոցիալիզմի ջահ և որպես օրինակ։ Այնտեղ՝ տուրուդմփոց, պատերազմ, արյունահեղություն, միլիոնավոր մարդկանց զոհաբերում, կապիտալի շահագործում, այստեղ՝ իսկական խաղաղության քաղաքականություն ու Սովետների սոցիալիստական հանրապետություն»[1]։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 578։

Խաղաղության մասին Լենինի ստորագրած դեկրետը հսկայական ազդեցություն գործեց միջազգային հարաբերությունների և միջազգային իրավունքի ամբողջ ընթացքի վրա։ Սովետների համառուսաստանյան II համագումարում Լենինն ասել է՝ «...չէ որ կողոպտչական կառավարությունները ոչ միայն համաձայնության էին գալիս կողոպուտների մասին, այլև այդպիսի համաձայնագրերի մեջ նրանք զետեղում էին թե՛ տնտեսական համաձայնություններ և թե՛ զանազան այլ կետեր՝ բարիդրացիական հարաբերությունների մասին։ Սոցիալիստական պետության վերաբերմունքն այդ նորմաների և համաձայնությունների նկատմամբ տարբեր է։ Մենք սեղ չենք կաշկանդում պայմանագրերով։ Մենք չենք թողնի, որ մեզ խանգեն պայմանագրերի մեջ։ Մենք մերժում ենք կողոպուտների ու բռնությունների վերարերյալ բոլոր կետերը, բայց բոլոր այն կետերը, որոնց մեջ պարփակված են բարիդրացիական պայմաններ ու տնտեսական համաձայնություններ, մենք ուրախությամբ կընդունենք, դրանք մենք չենք կարող մերժել»[2]։

Նորաստեղծ սոցիալիստական պետությունը չեղյալ հայտարարեց այն անհավասար պայմանագրերը, որոնք կնքել էին ցարական և ժամանակավոր կառավարությունները։

Խաղաղության մասին դեկրետը դրսևորեց սկզբունքորեն նոր մոտեցում միջազգային քաղաքականության նկատմամբ։ Իրագործվեց Կ. Մարքսի կանխագուշակումն այն մասին, որ սոցիալիստական հեղափոխության հաղթանակով «մարդկային առաջադիմությունը կդադարի նմանվել այն հեթանոսական կուռքին, որը չի ցանկացել նեկտար (ըմպելիք) խմել այլ կերպ, քան սպանվածների գանգից»[3]։ Պատմությունը սովետական հասարակարգի վրա խնդիր է դրել մարդկությանը ազատագրել պատերազմներից։

Վերջին հիսուն տարին իրականում խաղաղության մասին լենինյան խարտիայի սկզբունքների ճակատային հարձակման պատմությունն է։

Դեկրետի ծրագիրը դարձնելով արտաքին քաղաքականության օրենսգիրք, սովետական պետությունը մի շարք պետությունների հետ ծանր պայմաններում կնքեց պայմանագրեր ու համաձայնություններ։ Լենինը և կուսակցությունը կյանքում հաստատակամորեն իրագործում էին դեկրետի դրույթները։

Լենինը ձևակերպեց սովետական արտաքին քաղաքականության երկու կարևորագույն սկզբունքները՝ սոցիալիստական ինտերնացիոնալիզմը և տարբեր սոցիալական կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցությունը։ Լենինը, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը խնդիր դրեցին նպաստել հողագնդի հեղափոխական շարժմանը։ Նման օգնություն ցույց տրվեց հունգարական սոցիալիստական հանրապետությանը (1918), իրավահավասար պայմանագրեր ստորագրվեցին Թուրքիայի (1920), Իրանի և Աֆղանստանի հետ (1921) և այլն։

Սովետների երկրի արտաքին քաղաքականության մեջ պրոլետարական սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքը օրգանապես զուգակցվում է տարբեր սոցիալական կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքի, խաղաղության համար պայքարի, նոր համաշխարհային

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 304։

3 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Երկեր, հ. 3, էջ 437։

պատերազմի կանխման սկզբունքի հետ։ Այսպես, օրինակ, 1922 թ. ապրիլի 16-ին՝ Ջենովայի (Իտալիա) միջազգային կոնֆերանսի նախօրյակին Ռապալլոյում ստորագրվեց սովետա-գերմանական հարաբերությունները նորմալացնող պայմանագիր։

Ջենովայի կոնֆերանսում իմպերիալիստական պետությունները փորձեցին սովետական պետությունից խլել այն, ինչ չէր հաջողվել զենքի ուժով՝ ինտերվենցիայի տարիներին։ Նրանք պահանջեցին, որպեսզի Սովետական Ռուսաստանը համաձայնվի մարել ցարական պարտքերը, Կերենսկու ժամանակավոր կառավարության և սպիտակ գեներալների պարտքերը, փոխհատուցել օտարերկրյա կապիտալիստների վնասները, ազգայնացված ձեռնարկությունների արժեքը և փաստորեն նրանց հնարավորություն տալ տիրապետելու մեր երկրին։

Սովետական պատվիրակությունը (Գ. Չիչերին, Լ. Կարախան) ներկայացրեց հակապահանջներ ինտերվենտների ավերումների համար՝ 50 միլիարդ ռուբլի ոսկի գումարով[4]։

Այսպիսով, 1921—1922 թթ. տեղի ունեցավ խաղաղ գոյակցության սովետական ըմբռնման վերջնական ձևավորումը։ Ստեղծագործաբար կիրառելով մարքս-լենինյան տեսությունը, ՍՄԿԿ անց է կացնում միջազգային հարաբերությունների յուրաքանչյուր էտապի իսկական գիտական վերլուծություն։ Լենինյան այդ վերլուծության հիմքի վրա ՍՄԿԿ ուղենշում է Սովետական Միության արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները և հետևողականորեն իրագործում դրանք կյանքում՝ իմպերիալիզմի և ռեակցիայի դեմ մղվող համառ պայքարում։ Դրա վառ արտահայտությունն է Հայրենական մեծ պատերազմը։ Հիտլերյան ֆաշիզմի հետ գոտեմարտը ցայտուն ցուցադրեց, որ սովետական ժողովուրդները դաշինքի մեջ, ընդհանուր ուժերով կարող են պաշտպանել իրենց ազատությունն ու անկախությունը, իրենց հեղափոխական նվաճումները։

Գերմանական ֆաշիզմի և ճապոնական միլիտարիզմի ջախջախումը հասցրին իմպերիալիզմի դիրքերի հետագա թուլացմանը և սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծմանը։

Իմպերիալիզմի հարվածային ուժերի դեմ տարած հաղթանակը մեր կուսակցության լենինյան քաղաքականության, սոցիալիստական, հասարակական և պետական կարգի հաղթանակն է, նրա պատմական առավելության ցայտուն ապացույցը։

Սովետական Միությունը միջազգային ասպարեզում անց է կացնում վճռական հակաիմպերիալիստական կուրս, հետևողականորեն և հաստատակամորեն պահպանում սոցիալիզմի, ժողովուրդների ազատության շահերը և համընդհանուր խաղաղության գործը։ Այդ արտաքին քաղաքական կուրսը, որը ներծծված է պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով, համապատասխանում է հողագնդի աշխատավորության հույսերին և իղձերին։

Պետական միասնության, նյութական և հոգեկան ուժերի անընդհատ աճի շնորհիվ, Սովետական Միությունն ունի անսպառ պաշտպանունակություն, որը նրա ազատության և անկախության, մեր ժողովրդի խաղաղ ստեղծագործական աշխատանքի հուսալի երաշխիքն է։

---

4 Տե՛ս «Правда», 16. IV. 1972։

ՍՄԿԿ Կենտկոմի XXIV համագումարին տված հաշվետվության մեջ Լ. Ի. Բրեժնևը նշեց. «Մենք ունենք անհրաժեշտ ամեն բան՝ թե խաղաղության ազնիվ քաղաքականություն, թե՛ ռազմական հզորություն, թե՛ սովետական ժողովրդի համախմբվածությունը, որպեսզի մեր սահմանների անձեռնմխելիությունն ապահովենք ամեն կարգի ոտնձգություններից և պաշտպանենք սոցիալիզմի նվաճումները»[5]։

Արդի պայմաններում խաղաղության և սոցիալական առաջադիմության հենարանն են Սովետական Միությունը և մյուս եղբայրական սոցիալիստական երկրները։

ՍՄԿԿ և սովետական պետության ներքին ու արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններն արտահայտվում են առօրյա գործերում, որոնք ավելի են բարձրացնում մեր երկրի հեղինակությունը միջազգային ասպարեզում և ապահովում ՍՍՀՄ արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության հետագա հաջող զարգացումն ու ժողովրդի նյութական և կուլտուրական մակարդակի բարելավումը։

ՍՄԿԿ XXIV համագումարը մշակեց արդի պայմաններում խաղաղության լենինյան հստակ ծրագիրը, որը դարձել է համաշխարհային քաղաքականության կարևորագույն գործոնը։ Սովետական նախաձեռնությամբ տարբեր հասարակական կարգ ունեցող մի շարք պետությունների հարաբերությունների հիմքում դրված են ներկա սահմանների անխախտելիության պահպանման, ներքին գործերին չմիջամտելու, հավասարության, անկախության, ուժի գործադրման կամ նրա կիրառման սպառնալիքից հրաժարվելու և այլ սկզբունքներ։

ՍՍՀՄ սկզբունքային, հետևողական արտաքին քաղաքականությունը համապատասխանում է Սովետական Միության, համաշխարհային սոցիալիզմի, ազգային ազատագրական շարժման արմատական շահերին, նպաստում է տարբեր սոցիալական կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքի կիրառմանը, իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականությանը հակահարված տալուն։

Սովետական Միությունը վարում է սոցիալիզմի երկրների հետ բազմակողմանի համագործակցության խորացման և զարգացման անփոփոխ կուրս։ Կյանքը հաստատում է, որ սոցիալիստական երկրների համագործակցությունը եղել և մնում է որպես միջազգային կապիտալիզմին ընդդիմացող գլխավոր ուժ, արդի ազատագրական շարժումների հզոր հենարան։ Սոցիալիզմի դիրքերն այսօր, ինչպես երբեք, հզոր են։

ՍՄԿԿ Կենտկոմի 1972 թ. մայիսյան պլենումում տված զեկուցման մեջ Լ. Ի. Բրեժնևը մարքս-լենինյան վերլուծության ենթարկեց արդի միջազգային իրադրությունը, համակողմանի բնութագրեց ՍՄԿԿ և սովետական պետության գործունեությունը միջազգային ասպարեզում, պարզաբանեց ՍՍՀՄ արտաքին քաղաքական արդիական խնդիրները։ Լ. Ի. Բրեժնևի զեկուցման վերաբերյալ պլենումի ընդունած որոշման մեջ ասված է. «Պլենումը Կենտկոմի քաղբյուրոյին հանձնարարում է այսուհետև ևս անշեղորեն կենսագործել XXIV համագումարի մշակած խաղաղության ծրագիրը և, կոնկրետ իրավիճակին հա-

---

5 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը ՍՄԿԿ XXIV համագումարին, Երևան, 1971, էջ 44։

մապատասխան, տարբեր ձևեր ու մեթոդներ օգտագործել դրա իրականացման համար, ներկայիս ընթացիկ անմիջական խնդիրների լուծումը օրգանապես շաղկապել ժողովուրդների խաղաղության, աղատության և անվտանգության, հասարակական առաջադիմության և սոցիալիզմի համար մղվող պայքարի տևական հեռանկարի ու նպատակների հետ»[6]։

Մեր կուսակցության լենինյան արտաքին քաղաքականության շնորհիվ ամրապնդվում են սոցիալիզմի դիրքերը Եվրոպայում, իրենց արդյունքներն են բերում ՍՍՀՄ և մյուս սոցիալիստական երկրների պրակտիկ միջոցառումները, որոնք ուղղված են այն բանին, որպեսզի Արևմուտքի և Արևելքի ուժերի թշնամական դիմակայության փոխարեն Եվրոպայում սկսվի խաղաղ փոխըմբռնման և համագործակցության շրջան։ Չնայած Արևմտյան Գերմանիայում ռեակցիայի դիմակայությանը, ՍՍՀՄ-ի և Արևմտյան Գերմանիայի միջև 1970 թ. օգոստոսի 12-ին և Լեհաստանի ու ԳԴՀ-ի միջև 1970 թ. դեկտեմբերի 7-ին կնքած փոխհարաբերությունների նորմալացման հիմունքների մասին պայմանագրերը վավերացվեցին Արևմտյան Գերմանիայի Բունդեստագի, ԼԺՀ պետական սովետի և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության կողմից։

ՍՍՀՄ-ը միջազգային հարաբերությունների սիստեմում ղեկավարվում է տարբեր հասարակական կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքով։ Սոցիալիստական և կապիտալիստական տերությունների խաղաղ գոյակցությունը մարդկային հասարակության գոյության օբյեկտիվ անհրաժեշտությունն է։

1972 թ. մայիսի 22—30-ը Մոսկվայում կայացած սովետա-ամերիկյան բանակցությունների շնորհիվ այդ հարցի լուծման ճանապարհին կարևոր քայլ կատարվեց։ Մայիսի 26-ին ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը և ԱՄՆ-ի պրեզիդենտ Նիքսոնը պայմանագիր ստորագրեցին հակահրթիռային պաշտպանության սիստեմները սահմանափակելու շուրջը և ՍՍՀՄ-ի ու ԱՄՆ-ի միջև ժամանակավոր համաձայնագիր՝ հարձակողական սպառազինությունները սահմանափակելու որոշ միջոցառումների մասին։

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կ. Վալդհայմը հայտարարեց. «Ինձ շատ ուրախացրեց հաղորդումն այն մասին, որ ՍՍՀՄ-ը և Ամերիկայի Միացյալ Նահանգները Մոսկվայում համաձայնության են հասել ստրատեգիական սպառազինության սահմանափակման մասին»[7]։

Ստորագրվեցին նաև «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների փոխհարաբերությունների հիմունքները» փաստաթղթերը, որոնցում ասված է, որ երկու կողմերը «ելնում են ընդհանուր համոզմունքից, որ միջուկային դարում չկա հարաբերությունների պահպանման այլ հիմք, քան խաղաղ գոյակցությունը»[8]։

Ընդունված է «Սովետա-Ամերիկյան համատեղ Կոմյունիկեն», որտեղ ցույց է տրված, որ սովետական կողմը բանակցություններում ընդգծեց իր համերաշխությունը ազատության, անկախության և սոցիալական առաջադիմության համար Վիետնամի, Լաոսի և Կամբոջայի ժողովուրդների արդար

---

6 «Սովետական Հայաստան», 20. V. 1972։

7 «Правда», 27.V. 1972։

8 «Սովետական Հայաստան», 30. V. 1972։

պայքարի հետ՝ հանուն իրենց ազատության, անկախության, հանուն սոցիալական առաջադիմության։

Սովետա-ամերիկյան բանակցությունների արդյունքների մասին ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի հայտարարության մեջ ասված է. «ՍՄԿԿ-ն, սովետական պետության ղեկավար մարմինները ջիղվին պաշտպանում են այն հետևողական, հաստատուն դիրքավորումը, որ բանակցություններում սովետական պատվիրակությունը շարադրեց Վիետնամում և Հնդկաչինի մյուս երկրներում շարունակվող ԱՄՆ-ի ագրեսիայի հարցի առթիվ։ Վիետնամական ժողովրդի հերոսական պայքարի հետ սովետական երկրի համերաշխությունը եղել ու մնում է անսասան»[9]։

Հետևողականորեն իրագործելով խաղաղ գոյակցության լենինյան քաղաքականություն, ՍՄԿԿ-ն չի նահանջում իր դաղափարական սկզբունքներից, մարքսիզմ-լենինիզմի անսասան սկզբունքներից, պրոլետարական, սոցիալիստական ինտերնացիոնալիզմից։ Պայքարը բուրժուական, ռևիզիոնիստական գաղափարախոսության և կապիտալիզմի մնացուկների դեմ մարդկանց գիտակցության մեջ պետք է լինի ակտիվ և հետևողական։

Մեր կուսակցությունը և կառավարությունը եղբայրական սոցիալիստական երկրների հետ համագործակցելով՝ առաջիկայում ևս կվարեն խաղաղության պաշտպանության և միջազգային անվտանգության ամրապնդման ակտիվ քաղաքականություն, կստարեն ժողովրդական մասսաների պայքարը հանուն խաղաղության, դեմոկրատիայի, ազգային անկախության, սոցիալական առաջադիմության, հանուն սոցիալիզմի և կոմունիզմի հաղթանակի։

МЕЖДУНАРОДНОЕ ЗНАЧЕНИЕ ОБРАЗОВАНИЯ СССР

А. А. ГАЛСТЯН

Резюме

Исполнятся 50 лет со дня образования Союза Советских Социалистических республик. Образование СССР по своей политической значимости и социально-экономическим последствиям занимает выдающееся место в истории.

Объединение советских республик на базе общенародной социалистической государственности явилось одним из решающих факторов беспримерных побед советских людей, превращения в прошлом слабо развитой страны в могучую высокоразвитию державу.

На знамени Великого Октября был начертан лозунг «Миру мир». Социалистическая революция родилась с идеей мира на устах. Воедино были неразрывно связаны три величайших понятия: *социализм, мир, свобода.*

Советский Союз и другие страны социалистического лагеря в тесном сотрудничестве добились огромных успехов в областях экономики, политики, военного могущества и ведут успешную борьбу за всеобщее разоружение.

XXIV съезд КПСС выработал ленинскую Программу мира. Осуществление этой политики приносит новые ощутимые плоды.

---

9 *«Սովետական Հայաստան», 2. VI. 1972։*